ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/69

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/102» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգ, բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 19.08.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել համապատասխան որոշում «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 19.08.2021թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 25.08.2021թ.-ի թիվ 450-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, բողոքի քննությունը 06.09.2021թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

07.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/69 համարի ծածկագիրը:

14.09.2021թ.-ին և 17.09.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.09.2021թ.-ին:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 19.08.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ն «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2021 թ. օգոստոսի 16-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի հրավերի թվով 1 չափաբաժնով պահանջվում է «Y-Վայ-կոնեկտոր » անվանումով ապրանքը (կից փաստաթագթ թիվ 2):

Հայտարարությունը հրապարակելու օրվա գրությամբ Պատվիրատուի կողմից չեն կատարվել գնման գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջները Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլանում առկա չէ Հրավերով պահանջվող «Y-Վայ-կոնեկտոր»

անվանումով ապրանքը (կից փաստաթուղթ թիվ թիվ 3, էջեր 1-94, որի մեծածավալ լինելու պատճառով այն փոխանցում ենք էլեկտրոնային տարբերակով):

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. օգոստոսի 16-ի թիվ 1 որոշմամբ հաստատված «Բժշկական գործիքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բոգոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել համապատասխան որոշում «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Համաձայն ՀՀ կառավարության կողմից 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-ն որոշմամբ հաստատված Կարգի թիվ 16, 17 և 18-րդ կետերի սահմանումների՝

«16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է Եթե տկյայ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնու մների սղանում կատարվում է լրացում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

18. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների սղանում, իսկ պայմանագրով

նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Ելնելով վերոգրյալից, «Խաչպար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի «ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել համապատասխան որոշում «ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/102» ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

3. <u>«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 20.08.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/13339-2021 գրությամբ դիմել է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.08.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 25.08.2021թ.-ին թիվ 489 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 2021թ.-ի օգոստոսի 16-ին հայտարարել է «ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/102» ծածկագրով բժշկական պարագաների ձեռքբերման մրցույթ: Օգոստոսի 19-ին մրցույթը բողոքարկվել է Խաչպար ՍՊԸ-ի կողմից:

Հայտարարությունը հրապարակելու օրվա դրությամբ Պատվիրատուի կողմից www.ppcm.am կայքում «Գնումների պլան» բաժնում գրանցվել է և տնօրենի կողմից հաստատվել է հրավերով պահանջվող «Y-կոննեկտոր» անվանումով ապրանքը: Գնումը կատարվել է հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ չբավարարել Խաչպար ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/69 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 16.08.2021թ.-ին հայտարարվել է «ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/102» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 16.08.2021թ.-ի որոշմամբ, իսկ հայտերի բացման նիստի օր է սահմանվել 18.08.2021թ.-ին ժամը 15:00-ն ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 120 հատ Y-Վայ-կոնեկտոր ապրանքատեսակը, գումարը նշված է՝ 0 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 33141211:

iv. www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 16.08.2021թ.-ին հրապարակված 2021 թվականի գնումների պլանի համաձայն՝ Ընթացակարգով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (33141211) ապրանք՝ Հրավերով սահմանված 120 քանակով առկա չէ:

v. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2021 թվականի գնումների փոփոխված պլանը հրապարակվել է www.gnumner.am կայքում 01.06.2021թ.-ին:

vi. www.gnumner.am կայքում մինչև 16.08.2021թ.-ը առկա տվյալների համաձայն՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հրապարակված 2021 թվականի գնումների պլանի փոփոխության մեջ բացակայում է «ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/102» ծածկագրով հայտարարված հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.08.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 16.08.2021թ.-ին հայտարարված «ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/102» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 120 հատ Y-Վայ-կոնեկտոր ապրանքատեսակը, գումարը նշված է՝ 0 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 33141211: www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 16.08.2021թ.-ին հրապարակված 2021 թվականի գնումների պլանի համաձայն՝

Ընթացակարգով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (33141211) ապրանք՝ Հրավերով սահմանված 120 քանակով առկա չէ: «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2021 թվականի գնումների փոփոխված պլանը հրապարակվել է www.gnumner.am կայքում 01.06.2021թ.-ին: www.gnumner.am կայքում մինչև 16.08.2021թ.-ը առկա տվյալների համաձայն՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հրապարակված 2021 թվականի գնումների պլանի փոփոխության մեջ բացակայում է «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով հայտարարված հրատապ մեկ անձից գնման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/102» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգը կազմակերպվել և գնման գործընթացը սկսվել է առանց իրավական հիմքի, ինչի արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Անդրադառնալով Պատվիրատուի կողմից ներկայացված այն հանգամանքին, որ հայտարարությունը հրապարակելու օրվա դրությամբ Պատվիրատուի կողմից www.ppcm.am կայքում «Գնումների պլան» բաժնում գրանցվել է և տնօրենի կողմից հաստատվել է հրավերով պահանջվող «Y-կոննեկտոր» անվանումով ապրանքը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 16.08.2021թ.-ին հրապարակված 2021 թվականի գնումների պլանի համաձայն՝ Ընթացակարգով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (33141211) ապրանք՝ Հրավերով սահմանված 120 քանակով առկա չէ, այլ դրա փոխարեն առկա է ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով (33141211/551) բժշկական այլ գործիքներ – պարագաներ անվանմամբ գնման առարկա՝ 0 հատ քանակի նշմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.08.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/69 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/102» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**